

3901



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան



«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 128 - 25

Նախաձեռնող՝

«ՆԱՐԵԿ ՍԷԱ» ՍՊԸ

Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Իսրաել Օրի 3ա/13

Գործունեությունը՝

Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասի
հարավային թևի օգտակար հանածոյի արդյունահանում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 128 - 25

«19» Մայիս 2025թ.

Սյունիքի մարզի Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասի հարավային թևի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆԱՐԵԿ ՍԷԱ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Շաքի բնակավայր

Ներածական մաս. «ՆԱՐԵԿ ՍԷԱ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական տարածքում՝ իրականացնել Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասի հարավային թևի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասը գտնվում է Սյունիքի մարզի տարածքում, Շաքի գյուղից 0.8 կմ դեպի հյուսիս-արևմուտք, մոտակա բնակավայրերն են՝ Շաքին 0.8 կմ, Սիսիանը՝ 6.5 կմ: Նախատեսվող հանքի տարածքը գտնվում է Երևան-Մեղրի Մ-2 ավտոճանապարհից 0,6 կմ հեռավորության վրա: Տարածքը բնութագրվում է հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ 39°34'11.17" հյուսիսային լայնությամբ, 45°59'14. 49" արևելյան երկայնությամբ: Նախագծով բացահայտված օտարման մակերեսը կազմում է 8518 մ²: Տեղամասի տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի՝ գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ինչպես նստվածքային, հրաբխանստվածքային, այնպես էլ տրոփաքարային, ինտրուզիվ և մետամորֆային, ապարները: Անդեզիտաբազալտները գրավում են հանքավայրի ողջ



տարածքը և հանդիսանում են Կետանդաղ հրաբխի լավային հոսքի հարավ-արևելյան մասը: Հանքավայրի սահմաններում Կետանդաղ հրաբխի լավային հոսքն ունի շերտանման տեսք և համարյա հորիզոնական տեղակայում աննշան թեքությամբ դեպի հարավ արևելք, ներկայացված է անդեզիտաբազալտներով, որոնց հզորությունը հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք ավելանում է: Այստեղ առանձնանում են լավային 3 հոսք: Ըստ արտաքին տեսքի՝ անդեզիտաբազալտները մուգ մոխրագույնից մինչև սև գույնի են: Հիմնականում ապարներն ունեն միատարր կազմ՝ նուրբ ծակոտկեն կառուցվածքով: Ավելի ամուր և միատարր անդեզիտաբազալտները մուգ մոխրագույն են, զարգացած են հանքավայրի արևելյան թևում:

Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներքևից վերև հետևյալն է՝

- վերին պլիոցենի գորշ գույնի դիատոմիտային ավազակավային նստվածքներ,
- վերին չորրորդականի 0.2-0.5 մ հզորության հրաբխային խարամներ՝ գորշից դեղնաշագանակագույն, խիստ ծակոտկեն, թեթև և փխրուն,
- վերին չորրորդականի անդեզիտա-բազալտներ՝ օգտակար հանքակուտակ: Ապարը հիմնականում թարմ է, մանրածակոտկեն, թույլ ճեղքավորված, մուգ մոխրագույնից սև գույնի է: Հանքակուտակի մերձմակերևութային մասում նկատվում է խիստ ճեղքավորված, մասամբ հողմնահարված շերտ՝ 0.4 մ-ից մինչև 2.4 մ հզորությամբ:
- ժամանակակից նստվածքներ՝ 0.4 մ-ից մինչև 3.5 մ հզորությամբ, ներկայացված են դելյուվիալ-պրոլյուվիալ ավազակավային առաջացումներով՝ խճի (հիմնականում բազալտային կազմի) խառնուրդով (մոտ 1.0 մ միջին հզորությամբ):

Հանքավայրի տարածքում զարգացած են շագանակագույն խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացված հողերը: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կարբոնատային մեխանիկական կազմով: Հայցվող տարածքի քաղցրահամ ջրերի հզոր հորիզոնը, որը կապված է վերին պլիոցենի ու չորրորդական հասակի հրաբխային առաջացումների հետ և շրջապտույտ է կատարում ճեղքավորված բազալտային ու անդեզիտաբազալտային լավաներում, դուրս է գալիս մակերևույթ, այսպես կոչված, «Շաքիի աղբյուրների» տեսքով՝ հանքավայրի III տեղամասից մոտ 1.2 կմ արևելք:

Համաձայն գնահատման հաշվետվության տեղեկատվության հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Հանքավայրի և հարակից տարածքները առնչություն չունեն բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության հուշարձանների հետ:

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները WGS-84 (ARMREF 02) համակարգով հետևյալն է՝

N/N	Կոորդինատները	
	X	Y
1.	4382262	8584809
2.	4382280	8584797
3.	4382304	8584812
4.	4382307	8584827
5.	4382333	8584824
6.	4382362	8584786
7.	4382410	8584793
8.	4382350	8584881

N/N	Կոորդինատները	
	X	Y
9.	4382327	8584872
10.	4382322	8584883
11.	4382298	8584866
12.	4382284	8584868
13.	4382239	8584840
14.	4382242	8584830
15.	4382253	8584817
16.	4382262	8584809



Սյունիքի մարզի Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասի պաշարները հաստատվել են են ՀՀ ՕՀՊԳԿ-ի կողմից թիվ 54 արձանագրությամբ 11.05.1999 թ., որպես երեսպատման ու շինարարական քար բլոկների 43 % միջին ելքով՝ հետևյալ կարգերով ու քանակներով.

A կարգ - 115.1 հազ.մ³,

B կարգ - 94.3 հազ.մ³,

C1 կարգ - 516.1 հազ.մ³,

Ընդամենը - 725.5 հազ.մ³:

Հանքավայրի պաշարները՝ անդեզիտաբազալտներն իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով բավարարում են «Բլոկներ բնական քարից երեսպատման իրերի արտադրության համար» 9479-84 ԳՈՍՏ-ին համապատասխան բլոկների և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-94 ՀՍՏ-ին և ԳՈՍՏ 238445-համապատասխան ժայռային լեռնային ապարներից շինարարական խճի ստացման համար: Հանքավայրն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության դասվել է հանքավայրերի 1-ին խմբի «բ» ենթախմբին:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից՝ տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով, նախնական փխրեցմամբ՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հանքավայրի մշակման համար ընտրվելու է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին ժամանակավոր լցակույտեր տեղափոխումով: Ծառայման ժամկետն է 20 տարի:

Բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- ամենամեծ երկարությունը - 124 մ,
- ամենամեծ լայնությունը - 107 մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը - 9.0 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը - 7.6 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը - 2.1 մ
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը - 64750 մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը - 53.2 հազ.մ³,
- մակաբացման ապարների քանակը - 17850 մ³,
- բացահանքի օտարման մակերեսը - 8518 մ²:

Բուն հայցվող 0.8518 հա տարածքը հանքարդյունահանման աշխատանքներով խախտված չէ, բայց տեղամասի արևելյան և արևմտյան կողմերից իրականացվել է անդեզիտաբազալտների բլոկների և շինաքարերի արդյունահանում, և տեղամասի հարակից տարածքներն ամբողջությամբ խախտված են:

Նույն տեղամասի արևելյան կողմից «Նարեկ ՍԷԱ» ՍՊԸ-ն իրականացրել է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ, որի ժամանակ ձևավորվել են 2 լցակույտեր՝ հարավային կողմում խճի հետ խառը ավազակավային առաջացումներով մակաբացման ապարների վերին շերտի /փոխար ապարների/, իսկ արևելյան կողմում՝ ջարդոտված բազալտների: Վերականգնված տարածքներ չկան, քանի որ արդյունահանման աշխատանքները պետք է շարունակվեն:

Բացահանքի շահագործման ընթացքում կորուստներ կազմելու են 11550 մ³ կամ 17.84%:

Հանքավայրի բացումը կատարվելու է նրա հյուսիս արևելյան մասի՝ 1797.0 մ բարձրության նիշից:



Նախատեսված է ավտոճանապարհի անցում բացահանքի հարավ արևելյան մասից, գրունտային ավտոճանապարհով:

Լեռնակապիտալ աշխատանքներն են՝

1. նախատեսված է ավտոճանապարհի անցում բացահանքի հարավ արևելյան մասից, գրունտային ավտոճանապարհի 1780.0 մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1797.0 մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունն է՝ 150 մ, 6 մ լայնությամբ: Հողային աշխատանքների ծավալն է՝ 620 մ³:
 2. բացահանքի շահագործման շինարարական շրջանում 1797.0 մ բարձրության հորիզոնում,
 - մակաբացման ապարների հեռացում 450 մ³,
 - 180 մ³ ծավալով պաշարների արդյունահանում (ուղեկցվող հանույթ),
 3. արդյունաբերական հրապարակի կառուցում - 150 մ³
- Ավտոճանապարհների անցումը, մակաբացման ապարների հավաքումը և կուտակումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, խորացող, մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝
հանքաստիճանի բարձրությունը - 3.0 մ,
անվտանգության բերմայի լայնությունը - 1.0 մ,
աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը - 90°,
աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է ժամանակավոր արտաքին բուլդոզերային լցակույտառաջացում, որոնց ծավալները հետևյալն են՝

Մակաբացման ապարներ՝ 17850 մ³, այդ թվում՝

ա. խճի հետ խառը ավազակավային առաջացումներով հողաբուսական շերտ 9370 մ³,
 $9370 \text{ մ}^3 \times 1.1 = 10307 \text{ մ}^3$:

բ. ջարդոտված բազալտները՝ 8480 մ³,
 $8480 \text{ մ}^3 \times 1.3 = 11024 \text{ մ}^3$:

որտեղ 1.1, և 1.3-ը - փխրեցման գործակիցն է:

Բացահանքի սահմաններում մակաբացման ապարները 17850 մ³ ընդհանուր քանակով ներկայացված են փխրուն ապարներ /խճի հետ խառը ավազակավային առաջացումներով հողաբուսական շերտ/՝ հզորությունը՝ 1.1 մ և ջարդոտված անդեզիտաբազալտներ /փուշտա/՝ 1.0 մ հզորությամբ: Փխրուն ապարները բուլդոզերով կտեղափոխվեն բացահանքի հարևանությամբ՝ նրա արևմտյան մասում ժամանակավոր ձևավորվող N 1 արտաքին լցակույտ, իսկ ջարդոտված բազալտներն ավտոինքնաթափով կտեղափոխվեն բացահանքի հարավ արևելյան մասը՝ N 2 ժամանակավոր արտաքին լցակույտ:

N 1 և N 2 ժամանակավոր արտաքին լցակույտերը տեղադրվելու են նախկինում արդեն ամբողջ հզորությամբ արդյունահանված տարածքների վրա: Լցակույտերի շեփի թեքման անկյունը կազմում է՝ $\alpha = 33-35^\circ$: Ժամանակավոր լցակույտերի մակերեսն է՝ N 1 լցակույտ վերին մասում՝ 1195 մ², հիմքում՝ 1860 մ², միջին բարձրությունը՝ 6.1 մ: N 2 լցակույտի վերին մասում՝ 790 մ², հիմքում՝ 1540 մ², միջին բարձրությունը՝ 7.2 մ:

Մակաբացման ապարները շահագործման 13-րդ տարվանից սկսած նախատեսվում է տեղափոխել բացված՝ 1794.0 մ, 1794.0,.....1782.0 մ բարձրության հորիզոնների հատակի վրա՝ աստիճանաբար ձևավորելով ներքին լցակույտ: Սկզբում կլցվի N 2 ժամանակավոր արտաքին լցակույտի ջարդոտված բազալտները, որի վրա էլ կլցվի N 1 լցակույտի փխրուն ապարները և կհարթեցվի, կկատարվի ներքին լցակույտառաջացում՝ խախտված տարածքների վերականգնմամբ: Բացահանքի հատակին տեղադրվող մակաբացման ապարների



շերտի հզորությունը կկազմի 2,23 մ (սկզբում կլցվի ջարդոտված բազալտները h-1.17 մ բարձրությամբ, նրա վրա կլցվի փուխր ապարները՝ 1.06 մ բարձրությամբ):

Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորը կարելի է օգտագործել լցակույտառաջացման ժամանակ:

Շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ նախ 0.5 կմ շառավղով դրանք բացակայում են և հանքարդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է փոշենստեցման, ինչպես նաև աշխատողների խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Տեխնիկական և խմելու ջուրը նախատեսվում է բերել պայմանագրային հիմունքներով «Վեոլիա Ջուր» և «Սյունիք» ՋՕ ընկերությունների Սիսիան տեղամասից, որոնց հետ ձեռք է բերվել ՋՕ պայմանագրեր կնքելու նախնական համաձայնություն /պայմանագիր կկնքվի արդյունահանման թույլտվություն ստանալուց հետո/:

Հանքավայրի տարածքում հողի բերրի շերտը բացակայում է: Տարածքը՝ ոչ համատարած ծածկված է մոտ 1.1 մ հզորությամբ փխրուն ապարներով /հնարավոր բերրի ապարներ՝ խճի հետ խառը ավազակավային առաջացումներ/:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո: N 1 լցակույտում պահեստավորվելու են փխրուն ապարները, որոնք աշխատանքների ավարտից հետո, կօգտագործվեն խախտված տարածքների կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով: 1782 մ բարձրության հորիզոն N 2 լցակույտից կբերվեն ջարդոտված բազալտները, որի վրա էլ կլցվի 1785.0 մ բարձրության վրա տարված 2.0 մ բարձրությամբ N 1 լցակույտի ավազակավային առաջացումներով խճի հետ խառը փուխր ապարները և կհարթեցվի: Ապարների տեղափոխումը և հարթեցումը կատարվում է բուլդոզերի օգնությամբ:

Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսում՝ 8000 մ², արտաքին ժամանակավոր լցակույտերի տարածքներում՝ 3400 մ², մուտքային ավտոճանապարհ՝ 900 մ², ինչպես նաև արտադրական հրապարակ՝ 250 մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 12550 մ² կամ 1.255 հա:

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի): Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև ձորակներով մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Հանքավայրի արդյունահանման ընթացքում ընդերքօգտագործման թափոններ են համարվում՝ մակաբացման ապարները (V դասի թափոն) և արտադրական թափոններ: Արտադրական թափոնները կամ հանույթից առաջացած ջարդաքարերը հանդիսանում են օգտակար հանածո, պաշարներում հաշվարկվել և հաստատվել են որպես շինարարական աշխատանքների համար խճի և ավազի հումք և տարեկան 1516.2 մ³ ծավալով սպառողի կողմից իրացվելու է բացահանքից:

Բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած ժայռային մակաբացման ապարները դասվել են վտանգավորության 5-րդ դասին, հանդիսանում են ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ:



Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,

- լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորում, լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա չեզոքացուցիչների տեղադրում, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում մակաբացման շերտի ապարներով,
- լցակայանի, խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակայանի մակերեսից փոշու ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում,
- արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները,
- շահագործման արդյունքում առաջացող կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, ինչի հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով,
- կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ՝ վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություններ և այլն:

Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, արտակարգ իրավիճակների կառավարման բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 1021.8 հազ. ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների վիճակի պարբերական ստուգումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4. Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան 180 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և լսումները կատարվել են Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում:



Շաքի բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լուսնւնեւրում գործունեւության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետււության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, Սիսիանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետււության լրամշակումներում: Ամփոփելով գնահատման հաշվետււության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեւության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են լեռնային նախապատրաստական աշխատանքների և արդյունահանման հետ՝ համաձայն գնահատման հաշվետււությամբ ներկայացված տեղեկատւության կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեւության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում է պահպանել ՇՄԱԳ հաշվետււությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումն, ինչպես նաև Սիսիան համայնքում (Շաքի բնակավայր) ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրւարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետււությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետււությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
3. Գործունեւության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:
4. Գործունեւության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:
5. Հետագայում՝ խճի և ավազի արտադրության համար նախատեսվող արտադրամասիում, ջարդիչ կայանքի նախատեսման դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեւության նախագծման փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային



արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

8. Ապահովել հաշվետվությանը ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՆԱՐԵԿ ՍԷԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Շաքիի անդեզիտաբազալտների հանքավայրի 3-րդ տեղամասի հարավային թևի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի Ժամանակավոր պաշտոնակատար՝

Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան